

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
թեկտր, ԳԽ Նախագահ

Ն. Խ. Սարիբեկյան



« 21 »

// 2020 թ.

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՏՆՕՐԻՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ	3
2. Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը	4
2.1.Ֆինանսական հաշվետվությունների փաթեթը	4
2.2.Հաշվապահական հաշվեկշիռ	4
2.3.Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
2.4.Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
2.5.Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	5
2.6.Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	6
3. Ֆինանսական հաշվառման մեթոդաբանություն ընտրված տարբերակներ	7
3.1.Հիմնական միջոցներ	7
3.2.Անավարտ ոչ նյութական ակտիվներ	11
3.3.Ներդրումային գույք	11
3.4.Ոչ նյութական ակտիվներ	13
3.5.Դեբիտորական պարտքերի հաշվառումը	14
3.6.Կրեդիտորական պարտքերի հաշվառումը	15
3.7.Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվանցումը	16
3.8.Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	16
3.9.Պաշարներ	16
3.10.Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները	17
3.11.Փոխառության ծախսումներ	17
3.12.Էական սխալներ	18
3.13.Փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներ	19
3.14.Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ	19
3.15.Աշխատակիցների կարճաժամկետ հատկացումները	20
3.16.Շահութահարկի գծով ծախսեր	21
3.17.Ակտիվների արժեզրկում	23
3.18.Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր	30
3.19.Ֆինանսական վարձակալություն	31
3.20.Գործառնական վարձակալություն	31
3.21.Պահուստներ, պայմանական պարտավորություններ, պայմանական ակտիվներ	32
3.22.Արժեքորոշման և ֆինանսական արդյունքների որոշման ժամանակաշրջան	33
4. Հարկային հաշվառման մեթոդաբանության ընտրված տարբերակներ	33
4.1.Հիմնական միջոցներ	33
4.2.Ոչ նյութական ակտիվներ	33
4.3.Դեբիտորական և կրեդիտորական պարտքեր	34
4.4.Այլ հոդվածներ	34
5. Հաշվապահական հաշվառման կազմակերպում և վարում	34

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Ավանդական բժշկության համալսարանը հաշվապահական հաշվառումը վարում է հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի («Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հաշվապահական հաշվառմանը վերաբերող այլ օրենքներ, Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներ և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտեր) համաձայն:
- 1.2. Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ, դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքագրման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով:
- 1.3. Հաշվապահական հաշվառման խնդիրներն են՝
 - տնտեսական գործառնությունների և կազմակերպության գործունեության արդյունքների վերաբերյալ ամբողջական և արժանահավատ տեղեկատվության ձևավորումը,
 - գույքի առկայության և շարժի, նյութական, աշխատանքային և ֆինանսական միջոցների (ռեսուրսների) օգտագործման նկատմամբ վերահսկողության ապահովումը,
 - ֆինանսատնտեսական գործունեության բացասական երևույթների մասին ժամանակին գգուշացումը, ներտնտեսական ռեսուրսների բացահայտումը և հավաքագրումը:
- 1.4. Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոններն են՝
 - հաշվապահական հաշվառումը վարվում է՝
 - ա) Հայաստանի Հանրապետության արժույթով՝ հայկական դրամով,
 - բ) կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման աշխատանքային հաշվային պլանին համապատասխան,
 - գ) անընդհատ՝ ընկերության գրանցման պահից մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը.
 - անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալները պետք է համապատասխանեն միմյանց,
 - բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքները պետք է հաշվապահական հաշվառման հաշիվներում գրանցվեն ժամանակին՝ այնպես, որ դրանք արտացոլվեն այն հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որին դրանք վերաբերում են:
- 1.5. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունն այն կոնկրետ սկզբունքներն են, հիմունքները, եղանակները, կանոնները, ձևերը և ընթացակարգերը, որոնք ընդունվում են կազմակերպության կողմից՝ հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և ներկայացնելու համար:
- 1.6. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում ընտրված մեթոդաբանությունը ապահովում է, որպեսզի ֆինանսական հաշվետվությունները բավարարեն կիրառվող Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման յուրաքանչյուր ստանդարտի բոլոր պահանջներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին: Հատուկ պահանջներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին: Հատուկ պահանջի բացակայության դեպքում մշակվում է այնպիսի քաղաքականություն, որ ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվությունը լինի՝
 - ա) տեղին՝ օգտագործողների կողմից որոշումներ ընդունելու համար,

բ) արժանահավատ այն առումով, որ այն.

I. ճշմարիտ ներկայացնի կազմակերպության գործունեության արդյունքները և ֆինանսական վիճակը,

II. արտացոլի ոչ միայն իրավական ձևը, այլև իրադարձությունների և գործառնությունների տնտեսական բովանդակությունը,

III. չեզոք է, այսինքն զերծ է կանխակալությունից,

IV. հաշվենկատ է,

V. ամբողջական է բոլոր էական դրսևորումներով:

1.7. Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու որևէ հարցի վերաբերյալ կոնկրետ ստանդարտի և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերի բացակայության դեպքում համալսարանն ինքնուրույն մշակում է հաշվապահական հաշվառման այնպիսի քաղաքականություն, որն համալսարանի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին կապահովի օգտակար տեղեկատվությամբ: Նշված դատողություններն անելիս համալսարանը հաշվի է առնում.

ա) նման հարցերին առնչվող հաշվապահական հաշվառման ստանդարտներով և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջները և ցուցումները,

բ) հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու սկզբունքները, ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի սահմանումները, դրանց ճանաչման չափանիշերը և չափման հիմունքները, ինչպես շարադրված է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով,

գ) գործնական փորձը՝ այն ճափով, որով դրանք համահունչ են սույն պարբերության «ա» և «բ» ենթակետերով սահմանվածներին:

2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

2.1. Ֆինանսական հաշվետվությունների փաթեթը

2.1.1. Համալսարանի ֆինանսական հաշվետվությունների փաթեթը, ինչպես նախատեսված է հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրությամբ, ներառում է.

ա) հաշվապահական հաշվեկշիռը,

բ) ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը,

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,

դ) դրամական հոսքերի մասին հաշվետվությունը,

ե) ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

2.2. Հաշվապահական հաշվեկշիռ

2.2.1. Համալսարանը, հիմնվելով իր գործառնությունների բնույթի վրա, հաշվապահական հաշվեկշռում ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացնում է առանձին դասակարգմամբ:

2.2.2. Ակտիվը դասակարգվում է որպես ընթացիկ, երբ այն.

ա) ակնկալվում է իրացնել մարել կամ պահել վաճառքի կամ սպառման համար համալսարանի սովորական գործառնական փուլի ընթացքում,

բ) պահվում է հիմնականում առևտրային նպատակով կամ կարճաժամկետ տևողությամբ և ակնկալվում է իրացնել հաշվեկշռի ամսաթվից հետո տասներկու ամսվա ընթացքում,

զ) ակտիվ է դրամական միջոցների կամ դրամական միջոցների համարժեքների տեսքով, որոնց օգտագործման որևէ սահմանափակում չկա:

Բոլոր այլ ակտիվները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ:

2.2.3. Պարտավորությունը դասակարգվում է որպես ընթացիկ, երբ այն

ա) ակնկալվում է մարել համալսարանի սովորական գործառնական փուլի ընթացքում,

բ) ենթակա է մարման հաշվեկշռի ամսաթվից հետո տասներկու ամսվա ընթացքում:

Բոլոր այլ պարտավորությունները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ:

2.3. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2.3.1. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ծախսերը ներկայացվում են՝ դասակարգելով դրանք ըստ գործառույթի, իսկ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում՝ ըստ բնույթի:

2.3.2. Տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթը կամ վնասը ընդգրկում է հետևյալ բաղադրիչները, որոնցից յուրաքանչյուրը բացահայտվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝

ա) շահույթ կամ վնաս՝ սովորական գործունեությունից,

բ) շահույթ կամ վնաս՝ արտասովոր հոդվածներից:

2.3.3. Սովորական գործունեությունը ցանկացած գործունեություն է, որն իրականացվում է համալսարանի կողմից, որպես իր գործունեության բաղկացուցիչ մաս, և այնպիսի առնչվող գործունեություն, որը համալսարանում իրականացնում է իր գործունեության զարգացման համար, կապված է, կամ առաջանում է իր գործունեությունից: Սովորական գործունեությունից առաջացող եկամուտները և ծախսերը իրենց հերթին, ելնելով դրանց բնույթից, համալսարանի համար դրանց հարաբերական կարևորությունից և կրկնման հաճախականությունից, բաժանվում են գործառնական և ոչ գործառնական եկամուտների և ծախսերի:

2.3.4. Արտասովոր հոդվածները եկամուտներ կամ ծախսեր են, որոնք առաջանում են այն դեպքերից կամ գործարքներից, որոնք հստակ տարբերվում են համալսարանի սովորական գործունեությունից, հետևաբար չի ակնկալվում դրանց հաճախակի կամ պարբերաբար կրկնվելը, և որոնք համալսարանի վերահսկողությունից դուրս են:

2.4. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը

2.4.1. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում ներկայացվում են հետևյալ բաղկացուցիչները.

ա) հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթը կամ վնասը,

բ) հաշվետու ժամանակաշրջանում ուղղակիորեն սեփական կապիտալում ձանաչված եկամուտները և ծախսերը,

զ) սեփական կապիտալի այլ փոփոխությունները:

2.5. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2.5.1. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում հաշվետու ժամանակաշրջանում դրամական միջոցների հոսքերը ներկայացվում են՝ դրանք դասակարգելով ըստ գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեության:

2.5.2. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացման առումով գործառնական գործունեությունը համալսարանին եկամուտ բերող հիմնական գործունեությունն է, ինչպես նաև այլ գործունեությունը, բացառությամբ ներդրումային և ֆինանսական գործունեությունների: Գործառնական գործունեության արդյունքում

դրամական միջոցների հոսքերը ներկայացվում են՝ օգտագործելով ուղղակի մեթոդը, ըստ որի ցույց են տրվում համախառն դրամական մուտքերի և համախառն դրամական վճարումների հիմնական տեսակները:

- 2.5.3. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացման առումով ներդրումային գործունեությունը երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն ու օտարումն է, որոնք չեն ընդգրկվում դրամական միջոցների համարժեքների մեջ:
- 2.5.4. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացման առումով ֆինանսական գործունեությունը գործունեությունն է, որի հետևանքով տեղի են ունենում համալսարանի սեփական կապիտալի և փոխառու միջոցների ծավալի ու կառուցվածքի փոփոխություններ:
- 2.5.5. Դրամական միջոցների կամ դրանց համարժեքների միջև ներքին շարժերը (օրինակ՝ դրամարկղից բանկային հաշիվներ կամ ընդհակառակը) դրամական միջոցների հոսք չեն հանդիսանում, սակայն ներկայացվում են հաշվետվությունում՝ վերջնական մնացորդների և գրանցամատյանների տվյալների համապատասխանության նպատակով:
- 2.5.6. Արտարժույթով գործարքների հետևանքով առաջացած դրամական միջոցների հոսքերը գրանցվում են հաշվետվական արժույթով (հայկական դրամով)՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով հաշվետվական արժույթի և արտարժույթի միջև դրամական միջոցների հոսքերի օրվա դրությամբ առկա փոխանակման փոխարժեքը: Վերջնական մնացորդների և գրանցամատյանների տվյալների համապատասխանության նպատակով դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներառվում են նաև արտարժույթի փոխարժեքային տարբերությունների արդյունքը, սակայն վերջինիս դրամական միջոցների հոսք չի համարվում:

2.6. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

- 2.6.1. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում.
 - ա) ներկայացվում է ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու հիմունքների, ինչպես նաև ընտրված և էական գործառնությունների ու իրադարձությունների նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվություն,
 - բ) բացահայտվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվող այն էական տեղեկատվությունը, որը ներկայացված չէ ֆինանսական հաշվետվությունների բուն ձևերում (հաշվապահական հաշվեկշիռ, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն),
 - գ) տրամադրվում է լրացուցիչ տեղեկատվություն, որը ներկայացված չէ ֆինանսական հաշվետվությունների ձևերում, սակայն անհրաժեշտ է ֆինանսական տեղեկատվության ճշմարիտ ներկայացման համար:

**3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ**

3.1. Հիմնական միջոցներ

3.1.1. Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք առկա են համալսարանում.

ա) արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման կամ վարչական նպատակներով օգտագործելու համար,

բ) նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով:

3.1.2. Այն հողը կամ շինությունը, որը պահվում է հիմնականում վարձակալական եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի կամ էլ ներկայումս չորոշված նպատակով ապագա օգտագործման համար, դասակարգվում է որպես ոչ թե հիմնական միջոց, այլ ներդրումային գույք:

3.1.3. Հիմնական միջոցների միավորը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է որպես ակտիվ,

ա) ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի համալսարան,

բ) դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Այն հիմնական միջոցները, որոնց օգտագործումից համալսարանը տնտեսական օգուտների ներհոսք չի ակնկալվում, չեն ճանաչվում:

3.1.4. Այն դեպքերում, երբ հիմնական միջոցների տվյալ միավորը կազմող բաղկացուցիչները բավականաչափ էական են և ունեն տարբեր օգտակար ծառայություն կամ համալսարանին օգուտ են բերում տարբեր կերպով, դրանք ճանաչվում են որպես առանձին ակտիվներ:

3.1.5. Սկզբնական ճանաչման պահին հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով:

Այլ կողմերից ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումներն հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվում է նույն սկզբունքներով, ինչ պաշարների ինքնքրծեքը: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են կապալառուից ընդունված աշխատանքների արժեքի համագումարով:

3.1.6. Հիմնադիր և (կամ) համալսարանի ռեկտորի կողմից սահմանված դեպքերում հիմնական միջոցների մուտքագրումը, ինչպես նաև շահագործման հանձնումը համալսարանում իրականացվում է այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից:

3.1.7. Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները չափվում են հետևյալ չափման հիմունքներով.

Դասի անվանումը	Չափման հիմունքները
Հողամասեր	վերագնահատված արժեքով
Շենքեր	վերագնահատված արժեքով
Կառուցվածքներ	վերագնահատված արժեքով
Սարքավորումներ	սկզբնական արժեքով
Տրանսպորտային միջոցներ	սկզբնական արժեքով
Արտադրատնտեսական գույք, գործիքներ	սկզբնական արժեքով
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	սկզբնական արժեքով
Գրադարանային ֆոնդ-ուսումնական գրականություն	սկզբնական արժեքով
Գրադարանային ֆոնդ-գիտական գրականություն	վերագնահատված արժեքով
Այլ հիմնական միջոցներ	սկզբնական արժեքով

3.1.8. Հիմնական միջոցների վերագնահատված արժեքով հաշվառումը իրականացվում է հետևյալ սկզբունքով.

ա) հիմնական միջոցները վերագնահատված արժեքով հաշվառելու դեպքում այդ հիմնական միջոցները հաշվեկշռում ներկայացվում են վերջին գնահատման ամսաթվի դրությամբ իրական արժեքով՝ հանած այդ ամսաթվից հետո կուտակված մաշվածությունը և արժեզրկումը,

բ) վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցները վերագնահատվում են, երբ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքը էականորեն տարբերվում է դրանց հաշվեկշռային արժեքից:

Լրացուցիչ տեղեկատվության բացակայության դեպքում վերագնահատումը իրականացվում է հետևյալ պարբերականությամբ.

Դասի անվանումը	Վերագնահատման պարբերականությունը
Հողամասեր	5 տարի
Շենքեր	5 տարի
Կառուցվածքներ	5 տարի
Գրադարանային ֆոնդ-գիտական գրականություն	5 տարի

3.1.9. Հողի և շինությունների իրական արժեքը դրանց շուկայական արժեքն է: Սարքավորումների և այլ հիմնական միջոցների իրական արժեքը դրանց փորձաքննության միջոցով որոշված շուկայական արժեքն է: Երբ հիմնական միջոցների յուրահատուկ բնույթի և դրանց հազվադեպ վաճառելու պատճառով չկա ձևավորված շուկայական արժեք՝ դրանք գնահատվում են փոխարինման արժեքով՝ հանած մաշվածությունը:

- 3.1.10. Երբ հիմնական միջոցների միվորը վերագնահատվում է, վերագնահատման պահի դրությամբ կուտակված մաշվածությունը վերաձևակերպվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (այսինքն սկզբնական արժեքի կամ դրան փոխարինող այլ գումարի) փոփոխությունը համամասնորեն այնպես, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատումից հետո հավասարվում է նրա վերագնահատված գումարին:
- 3.1.11. Հիմնական միջոցների միավորի վերագնահատման արդյունքում առաջացած աճը, որը ներառված էր սեփական կապիտալում հաշվեգրվում է չբաշխված շահույթին ակտիվն օգտագործելու ընթացքում՝ մաշվածության հաշվարկմանը գույրնթաց:
- 3.1.12. Հիմնական միջոցներին վերաբերող հետագա ծախսումները ավելացվում են դրանց հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ այդ հիմնական միջոցից համալսարան կհոսեն ավելի շատ ապագա տնտեսական օգուտներ, քան ակնկալվում էր այդ հիմնական միջոցի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, այսինքն՝ երբ դրանց շնորհիվ բարելավվում են հիմնական միջոցների՝ սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշները, մասնավորապես, երկարում է օգտակար ծառայությունը, ավելանում է հզորությունը, բարելավվում է թողարկվող արտադրանքի որակը կամ արտադրական ծախսումները էապես կրճատվում են:
- 3.1.13. Հիմնական միջոցների նորմատիվային ցուցանիշների գնահատականը իրականացվում է այդ հիմնական միջոցների՝ շահագործման հանձնելու ժամանակ, շահագործման ընդունելու համար պատասխանատու հանձնաժողովի կողմից:
- 3.1.14. Հիմնական միջոցների վրա հետագա ծախսումների իրականացման դեպքում այդ աշխատանքները ընդունող հանձնաժողովը, իսկ վերջինիս բացակայության դեպքում համալսարանի գլխավոր հաշվապահը՝ ներգրավելով այդ աշխատանքներն իրականացնող ստորաբաժանման կամ այլ մասնագետների, տալիս է եզրակացություն նորմատիվային ցուցանիշների՝ սկզբնապես գնահատված մակարդակի համեմատությամբ բարելավման կամ չբարելավման վերաբերյալ, որն էլ հիմք է հանդիսանում այդ ծախսումները կապիտալացնելու վերաբերյալ որոշում կայացնելիս:
- 3.1.15. Հիմնական միջոցների ձեռք բերումից հետո կատարված ծախսումների հաշվառման մոտեցումը կախված է այն հանգամանքներից, որոնք նկատի են առնվել հիմնական միջոցների միավորների սկզբնական չափման և ճանաչման ժամանակ: Օրինակ՝ այն դեպքերում, երբ հիմնական միջոցների միավորի հաշվեկշռային արժեքը արդեն արտացոլում է տնտեսական օգուտների կորուստը՝ մաշվածության հաշվարկման նպատակով սկզբնապես կատարված գնահատումների պատճառով, ապա հետագա ծախսումները, որոնք ուղղված են ակտիվից ակնկալվող տնտեսական օգուտների ստացումը վերականգնելուն, կապիտալացվում են:
- 3.1.16. Հիմնական միջոցների գծով կատարվող մնացած բոլոր հետագա ծախսումները, այդ թվում հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման վրա կատարված ծախսումները, ճանաչվում են որպես ժամանակաշրջանի ծախս:
- 3.1.17. Հետագա ծախսումները կապիտալացվում են նաև այն դեպքում, երբ ակտիվի գնման գինը արդեն արտացոլում է հետագա ծախսումներ կատարելու անհրաժեշտությունը՝ կապված ակտիվը աշխատանքային վիճակի բերելու հետ (օրինակ՝ վերակառուցման կարիք ունեցող շինության ձեռք բերման դեպքում):

- 3.1.18. Հիմնական միջոցների միավորի մաշեցվող (մաշվածության միջոցով որպես ծախսում ճանաչման ենթակա) գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
- 3.1.19. Ակտիվի օգտակար ծառայությունն որոշելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները.
- ա) համալսարանի կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը, որը գնահատվում է՝ նկատի ունենալով ակտիվի ակնկալվող հզորությունը և ծառայությունների ֆիզիկական ծավալը,
 - բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը, որը կախված է արտադրական գործոններից, ակտիվի վերանորագման և սպասարկման, ինչպես նաև անգործության ընթացքում դրանց պահպանման և սպասարկման համալսարանի ծրագրից,
 - գ) ակտիվի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ:
- Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը արտահայտվում է ժամկետով: Հիմնական միջոցների օգտակար ծառայությունների գնահատականը տրվում է այդ հիմնական միջոցների՝ շահագործման հանձնելու ժամանակ, շահագործման ընդունելու համար պատասխանատու հանձնաժողովի կողմից:
- 3.1.20. Մաշվածության հաշվարկման կիրառվող մեթոդը արտացոլում է այն մոդելը, որով համալսարանը սպառում է ակտիվի տնտեսական օգուտները:
- Հիմնական միջոցի մաշվածության գումարը իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:
- Մաշվածության հաշվարկման գծային մեթոդի համաձայն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում կատարվում են հավասարաչափ հատկացումներ:
- 3.1.21. Այն համակարգչային ծրագրերը (ծրագրային ապահովման փաթեթները), առանց որոնց տվյալ հիմնական միջոցը չի կարող աշխատել, կազմում են այդ հիմնական միջոցի անբաժանելի մասը և դրանց արժեքը ներառվում է այդ հիմնական միջոցի արժեքում:
- Երբ համակարգչային ծրագրերը (ծրագրային ապահովման փաթեթները), առանց որոնց տվյալ հիմնական միջոցի անբաժանելի մասը, դրանք դիտարկվում է որպես առանձին ոչ նյութական ակտիվ:
- 3.1.22. Անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացված հիմնական միջոցների (անշարժ գույքի) հաշվառումը իրականացվում է ՀՀՀՀՄ 20՝ Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում՝ ստանդարտին համապատասխան՝ որպես պետական շնորհներ: Այդ նպատակով աշխատանքային հաշվային պլանում բացվում է 4211 երկրորդ կարգի հաշիվը:
- 3.1.23. Հիմնական միջոցների ժամանակավորապես շահագործումից հանումը ճանաչվում է համալսարանի կողմից սահմանված կարգով, ելնելով հիմնական միջոցների օգտակար ծառայության որոշման նախնական գնահատականից:
- 3.1.24. Հիմնական միջոցների միավորը դուրս է գրվում հաշվապահական հաշվեկշռից, երբ այն օտարվում է կամ ընդմիջտ դուրս է հանվում օգտագործումից և ապագա ոչ մի տնտեսական օգուտ հետագայում դրանից չի ակնկալվում:
- 3.1.25. Այն դեպքերում, երբ ոչ պիտանի է դարձել հիմնական միջոցի առանձին բաղկացուցիչներից մեկը, առանց որի այդ հիմնական միջոցի աշխատանքը չի ընդհատվում, ապա իրականացվում է հիմնական միջոցների մասնակի լուծարում: Մասնակի լուծարման դեպքում որպես ծախս ճանաչվող մասը գնահատվում է այդ

հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում լուծարվող մասի տեսակարար կշռին համապատասխան:

3.1.26. Հիմնական միջոցների դուրս գրումը իրականացվում է այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից:

3.2. Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ

3.2.1. Սեփական ուժերով կառուցվող անավարտ հիմնական միջոցները հաշվառվում են դրանց վրա կատարված ծախսումների հանրագումարով: Անավարտ հիմնական միջոցներին ծախսումների վերագրումը կատարվում է ՀՀՀՀՍ 2 «Պաշարներ» ստանդարտում բերված մոտեցումներին համապատասխան:

Կապալառուի կողմից կառուցվող հիմնական միջոցները հաշվառվում են կապալառուից ընդունված (համալսարանի կողմից հատուցման ենթակա) աշխատանքների արժեքի հանրագումարով:

Այն դեպքում, երբ հիմնական միջոցները կառուցվում են միաժամանակ և սեփական ուժերով և կապառալուի կողմից, դրանց վերագրվող ծախսումները որոշվում են վերը նշված ծախսումների հանրագումարով:

3.2.2. Արդեն ճանաչված հիմնական միջոցների վրա կատարված հետագա ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ են, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից կհոսեն դեպի համալսարան: Մյուս բոլոր դեպքերում հետագա ծախսումները ճանաչվում են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախս:

3.2.3. Տեղակայման ենթակա սարքավորումների ձեռք բերումը հաշվառվում է այնպես, ինչպես հիմնական միջոցների ձեռք բերումը:

3.3. Ներդրումային գույք

3.3.1. Որպես ներդրումային գույք դասակարգվում են այն հողը կամ շինությունը (կամ հողը և շինությունը), որը պահվում է հիմնականում վարձակալական եկամուտ վաստակելու կամ երկար ժամկետում դրա արժեքի աճի, կամ էլ ներկայումս դեռևս չորոշված նպատակով:

3.3.2. Այն դեպքերում, երբ գույքի մի մասը պահվում է վարձակալական եկամուտ վաստակելու կամ արժեքի աճի համար կամ էլ ներկայումս դեռևս չորոշված նպատակով, իսկ մյուս մասը՝ արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման կամ վարչական նպատակներով օգտագործելու համար, ապա եթե նշված մասերը հնարավոր է առանձին-առանձին վաճառել, ապա դրանք հաշվառվում են առանձին-առանձին: Եթե այդ մասերը հնարավոր չէ առանձին-առանձին վաճառել, ապա այդ գույքը համարվում է ներդրումային գույք միայն այն դեպքում, եթե դրա միայն աննշան մասն է պահվում արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման կամ վարչական նպատակներով օգտագործելու համար: Հակառակ դեպքում այդ ներդրումային գույքը դիտարկվում է որպես հիմնական միջոց:

3.3.3. Այն դեպքում, երբ գույքի վարձակալության հետ միաժամանակ վարձակալներին մատուցվում են որոշակի ծառայություններ (օրինակ՝ հանրակացարանի շենքի դեպքում շահագործման և պահպանման, էլեկտրաէներգիայի և այլ ծառայություններ), ապա

- գույքը առանձնացվում է որպես ներդրումային գույք, եթե այդ ծառայությունները կազմում են վարձակալության տալու համաձայնության համեմատաբար աննշան մասը:
- 3.3.4. Ներդրումային գույքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում երբ.
- ա) հավանական է, որ այդ ներդրումային գույքի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն ընկերություն,
 - բ) ներդրումային գույքի արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափվել:
- Այն ներդրումային գույքը, որից ապագա տնտեսական օգուտների ներհոսք համալսարան չի ակնկալվում, չի ճանաչվում որպես ակտիվ:
- 3.3.5. Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, ընդ որում, սկզբնական արժեքի որոշումը իրականացվում է նույն հիմունքներով, ինչ հիմնական միջոցների դեպքում:
- 3.3.6. Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով՝ իրական արժեքով վերաչափումից շահույթները և վնասները ճանաչելով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ կամ ծախս: Բացառություն է կազմում այն ներդրումային գույքը, որի իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Այսպիսի ներդրումային գույքը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը, հիմնական միջոցների հաշվառմանը համանման՝ դրա մնացորդային արժեքը ընդունելով հավասար 0-ի:
- 3.3.7. Որպես ներդրումային դասակարգված գույքը վերադասակարգվում է ակտիվների այլ խմբի մեջ, կամ որպես ոչ ներդրումային դասակարգված ակտիվը վերադասակարգվում է որպես ներդրումային գույք այն և միայն այն դեպքում, երբ դրանց օգտագործման եղանակի մեջ առկա է փոփոխություն, որի վկայություններին են.
- ա) արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման կամ վարչական նպատակներով գույքի օգտագործումը սկսելը. այս դեպքում ներդրումային գույքը վերադասակարգվում է որպես սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք,
 - բ) գույքի բարելավումը սկսելը՝ հետագայում այն վաճառելու մտադրությամբ. այս դեպքում ներդրումային գույքը վերադասակարգվում է որպես պաշար,
 - գ) արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման կամ վարչական նպատակներով գույքի օգտագործումը ավարտելը. այս դեպքում սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույքը վերադասակարգվի որպես ներդրումային գույք,
 - դ) որպես պաշար դասակարգված գույքի՝ այլ կողմին գործառնական վարձակալության տալը. այս դեպքում պաշարները վերադասակարգվում են որպես ներդրումային գույք,
 - ե) գույքի կառուցման կամ բարելավման (որը իրականացվում է գույքը ապագայում որպես ներդրումային գույք օգտագործելու նպատակով) ավարտը. այս դեպքում կառուցված կամ բարելավված գույքը վերադասակարգվում է որպես ներդրումային գույք (կառուցման կամ բարելավման ընթացքում գույքը դասակարգվում է որպես հիմնական միջոց):
- 3.3.8. Մնացած ասպեկտներով ներդրումային գույքը հաշվառվում է հիմնական միջոցների հաշվառմանը համանման սկզբունքներով:

3.4. Ոչ նյութական ակտիվներ

- 3.4.1. Ոչ նյութական ակտիվները ֆիզիկական սուբստանցիայից գուրկ որոշելի (ինքնուրույն ֆիզիկացվող) ոչ դրամային ակտիվներ են, որոնք, որպես կատարված գործառնությունների (դեպքերի) արդյունք,
- ա) վերահսկվում են համալսարանի կողմից,
 - բ) պահվում են համալսարանում՝
 - արտադրությունում օգտագործելու,
 - ապրանքներ (արտադրանք) մատակարարելու,
 - ծառայություններ մատուցելու,
 - այլ անձանց վարձակալության տակու,
 - վարչական նպատակներով օգտագործելու համար,
 - գ) ունեն սահմանափակ օգտակար ծառայության ժամկետ,
 - դ) ներառվում են ՀՀՀՀՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտի գործողության ոլորտը:

- 3.4.2. Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարի պարբերական բաշխումն է նրա օգտակար ծառայության ընթացքում:
Ամորտիզացվող գումարը ակտիվի սկզբնական արժեքի կամ ֆինանսական հաշվետվություններում դրան փոխարինող այլ գումարի և մնացորդային արժեքի տարբերությունը:

Օգտակար ծառայություն՝

- ա) այն ժամանակահատվածը, որի ընթացքում համալսարանն ակնկալում է օգտագործել ակտիվը,
 - բ) արտադրանքի այն քանակը կամ աշխատանքների, ծառայությունների այն ծավալը, որն ակնկալվում է ստանալ (կատարել, մատուցել) ակտիվի օգտագործման միջոցով:
- 3.4.3. Ոչ նյութական ակտիվը պետք է ճանաչվի այն և միայն այն դեպքում, երբ՝
- ա) հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն,
 - բ) ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:
Համալսարանը պետք է գնահատի ապագա տնտեսական օգուտների հավանականությունը՝ կիրառելով խելամիտ և հիմնավորված ենթադրություններ, որոնք արտացոլում են ղեկավարության՝ այն տնտեսական պայմանների բազմության լավագույն գնահատականը, որոնք առկա կլինեն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:
- 3.4.4. Ոչ նյութական ակտիվը սկզբնապես պետք է չափվի սկզբնական արժեքով (ինքնարժեքով):
- 3.4.5. Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները)՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստ:
- 3.4.6. Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը պետք է պարբերաբար բաշխվի նրա՝ լավագույն գնահատականի հիման վրա որոշված օգտակար ծառայության ընթացքում:
Սովորաբար ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետը չի գերազանցում քսան տարին՝ սկսած այն ամսաթվից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:
Ամորտիզացիան պետք է հաշվարկվի այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:

3.4.7. Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունն հետևյալն է.

Դասի անվանումը	Օգտակար ծառայություն
Համակարգչային ծրագրեր	5 տարի
Լիցենզիաներ	5 տարի
Հողի օգտագործման իրավունք	99 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	5 տարի

բայց ոչ ավել, ոչ նյութական ակտիվի իրավաբանորեն ամրագրված օգտագործման ժամանակահատվածից:

- 3.4.8. Ամորտիզացիայի հաշվարկման կիրառվող մեթոդը պետք է արտացոլի այն մոդելը, որով կազմակերպությունը սպառում է ակտիվի տնտեսական օգուտները: Համալսարանը կիրառում է գծային մեթոդը:

3.5. Դեբիտորական պարտքերի հաշվառումը

- 3.5.1. Որպես դեբիտորական պարտք են դասակարգվում այն ֆինանսական ակտիվները, որոնք ստեղծվում են համալսարանի կողմից ուղղակիորեն պարտապանին (դեբիտորին) ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով, բացառությամբ այն դեբիտորական պարտքերի, որոնք համալսարանը մտադրված է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել (այնպիսի ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ), ինչպես նաև այլ ստացման ենթակա գումարները: Սույն բաժնում նկարագրված մոտեցումները կիրառվում են նաև տրված կանխավճարների հաշվառման նկատմամբ:

- 3.5.2. Դեբիտորական պարտքը ճանաչվում է հաշվեկշռում այն և միայն այն դեպքում, երբ համալսարանը դառնում է գործիքի պայմանագրային կողմ, այսինքն՝ երբ առաջանում է պահանջի իրավունքը:

- 3.5.3. Դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական հաշվում նշված գումարով (սկզբնական արժեքով), բացառությամբ այն դեպքերի, երբ գեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում դեբիտորական պարտքերը չափվում են ներկա (գեղչված) արժեքով՝ գեղչումը իրականացնելով ներքին հատույցադրույքով, եթե դեբիտորական պարտքը առաջացող գործարքի շուկայական գները կարելի է որոշել, և ընթացիկ ժամանակաշրջանում փոխառության (բանկային վարկի) դիմաց համալսարանից պահանջվող դրույքով, եթե դեբիտորական պարտքը առաջացնող շուկայական գները հնարավոր չէ որոշել:

- 3.5.4. Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ համալսարանը գնահատում է, թե արդյոք առկա է հայտանիշ, որը ցույց է տալիս, որ իր առանձին դեբիտորական պարտքը կամ դեբիտորական պարտքերի խումբը (պարտֆելը) կարող է արժեզրկված լինել: Առանձին դեբիտորական պարտքի հնարավոր արժեզրկման հայտանիշները ներառում են.

- ա) պարտապանի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- բ) պայմանագրի փաստացի խախտումը, օրինակ՝ գումարների չվճարումը կամ վճարման ուշացումը,
- գ) պարտապանին նրա ֆինանսական դժվարությունների հետ կապված արտոնյալ պայմանների տրամադրումը,

դ) նախորդ հաշվետու ժամանակաշրջանում այդ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի ճանաչումը:

Դեբիտորական պարտքերի պորտֆելի (խմբի) համար հնարավոր արժեզրկման հայտանիշ է հանդիսանում դեբիտորական պարտքերի պորտֆելի հավաքագրելիության նախորդ տարիների փորձը, որը ցույց է տալիս, որ դեբիտորական պարտքերի պորտֆելի ամբողջ անվանական գումարը չի հավաքագրվելու:

- 3.5.5. Առանձին դեբիտորական պարտքի համար արժեզրկումից կորստի գումարը հավասար է դրա հաշվեկշռային արժեքի և փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը, իսկ փոխհատուցվող գումարը հավասար է այդ դեբիտորական պարտքի մարման գնահատված գումարի զեղչված արժեքին, ընդ որում, որպես զեղչման դրույք է օգտագործվում ընթացիկ տոկոսադրույքը, որը այլ տեղեկատվության բացակայության պայմաններում ընդունվում է հավասար ընթացիկ ժամանակաշրջանում լրացուցիչ փոխառության դիմաց համալսարանից պահաջվող տոկոսադրույքին:
- 3.5.6. Դեբիտորական պարտքերի պորտֆելի (խմբի) համար արժեզրկումից կորստի գումարը հավասար է դրանց անվանական գումարի և մարման գնահատված գումարի զեղչված արժեքի միջև տարբերությանը: Մարման գումարը և ժամկետները գնահատվում են նախորդ 3 տարիներին ձևավորված փաստացի տվյալների հիման վրա: Նշված գումարները ճշգրտվում են, եթե էական փոփոխություններ են կատարվել դեբիտորական պարտքերի հավաքագրման մեխանիզմներում:
- 3.5.7. Ըստ խմբերի դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները գնահատելու համար դրանք դասակարգվում են հետևյալ խմբերի՝
ա) պետական գումաների գծով,
բ) ուսանողներից գանձվող ուսման վարձերի գծով,
գ) այլ դեբիտորական պարտքեր:
- 3.5.8. Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկումից կորուստը նվազում է, և այդ նվազումը օբյեկտիվորեն կարելի է կապել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքի հետ (օրինակ՝ դեբիտորական պարտքերի հավաքագրման կամ պարտապանի վճարունակության բարելավում), ապա դեբիտորական պարտքի կամ դեբիտորական պարտքերի պորտֆելի (խմբի) արժեքի իջեցումը հակադարձվում է: Հակադարձումը ճպտոք է հանգեցնի դեբիտորական պարտքի (դեբիտորական պարտքերի խմբի) այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը կգերազանցի այն արժեքը, որը կլիներ, եթե այդ դեբիտորական պարտքի (դեբիտորական պարտքերի խմբի) արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկումը ճանաչված չլիներ:
- 3.5.9. Դեբիտորական պարտքը դուրս է գրվում հաշվեկշռից միայն և միայն այն դեպքում, երբ համալսարանը կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը), համալսարանը կորցնում է այդ վերահսկողությունը, եթե այն իրացնում է պայմանագրով սահմանված օգուտների նկատմամբ իրավունքները, իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը (հայցային վաղեմության) լրանում է կամ համալսարանը հրաժարվում է այդ իրավունքներից:

3.6. Կրեդիտորական պարտքերի հաշվառումը

- 3.6.1. Որպես կրեդիտորական պարտք են դասակարգվում այն մարման ենթակա գումարները, որոնք ստեղծվում են համալսարանի կողմից ուղղակիորեն պարտատիրոջից

(կրեդիտորից) ապրանքներ գնելու կամ ծառայություններ ստանալու միջոցով, ինչպես նաև այլ վճարման ենթակա գումարները: Սույն բաժնում նկարագրված մոտեցումները կիրառվում են նաև ստացված կանխավճարների հաշվառման նկատմամբ:

- 3.6.2. Կրեդիտորական պարտքը ճանաչվում է հաշվեկշռում միայն և միայն այն դեպքում, երբ համալսարանը դառնում է գործարքի պայմանագրային կողմ, այսինքն՝ երբ առաջանում է պահանջի իրավունքը:
- 3.6.3. Սկզբնական ճանաչման պահին կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական հաշվում նշված գումարով, բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:
- 3.6.4. Կրեդիտորական պարտքը դուրս է գրվում հաշվեկշռից այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը:

3.7. Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվանցումը

- 3.7.1. Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը հաշվանցվում են այն դեպքերում, երբ համալսարանը՝
 - ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,
 - բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) գուտ հիմունքներով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

3.8. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

- 3.8.1. Այլ ոչ ընթացիկ ակտիվների օրինակներ են.
 - ա) վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալացվող ծախսումները,
 - բ) հողամասերի բարելավման ծախսումները:
- 3.8.2. Այլ ոչ ընթացիկ ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը (ամորտիզացիան) և արժեզրկումը: Դրանց հաշվառումը իրականացվում է հիմնական միջոցների հաշվառմանը համանման:

3.9. Պաշարներ

- 3.9.1. Ուսուցման մատուցման ծառայության ինքնարժեքը կազմված է անմիջականորեն ծառայություն մատուցելու գործում զբաղված անձնակազմի (դասախոսների) վարձատրության ծախսումներից, օգտագործվող նյութերի ծախսումներից, ինչպես նաև ծառայություն մատուցելու հետ կապված համապատասխան ուսումնական վերադիր (փոփոխուն և հաստատուն) ծախսումներից:
Իրացման և վարչական վերադիր ծախսումները ծառայությունների ինքնարժեքի մեջ չեն ներառվում, այլ ճանաչվում են որպես ծախս այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դրանք կատարվել են:
Հաստատուն ուսումնական վերադիր ծախսումները ծառայության մատուցման հետ կապված այնպիսի անուղղակի ծախսումներ են, որոնք ուղղակիորեն կամ համարյա ուղղակիորեն փոփոխվում են ծառայության ծավալին համամասնորեն, օրինակ՝ դասավանդմանը առնչվող տեխնիկական անձնակազմի աշխատանքի վարձատրությունը:
- 3.9.2. Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» ԱՄԱԵ (FIFO)բանաձևով:

3.9.3. Պաշարների ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման գուտ արժեքի մակարդակ՝ ըստ տեսակների հաշվեկշռի ամսաթվի դրությամբ: Ծառայություններ մատուցելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման համար դրանք օգտագործվելու են, վաճառվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գներով: Պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման գուտ արժեք ցանկացած դուրս գրում ճանաչվում է ծախս այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը: Պաշարների նախկինում դուրս գրված գումարի ցանկացած վերականգնում, որը առաջանում է իրացման գուտ արժեքի բարձրացումից, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվում է բարձրացումը:

3.10. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները

3.10.1. Արտարժույթով գործարքն այնպիսի գործարք է, որը սահմանված է արտարժույթով, կամ որը պահանջում է արտարժույթով կատարում (կարգավորում):

3.10.2. Արտարժույթով գործարքը սկզբնական ճանաչման պահին գրանցում է Հայաստանի Հանրապետության դրամով (այսուհետ՝ Դրամ), արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով Դրամի և արտարժույթի միջև գործարքի օրվա դրությամբ առկա փոխանակման փոխարժեքը:

3.10.3. Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին՝

- ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվեն)՝ կիրառելով փակման փոխարժեքը,
- բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները ներկայացվում են գործարքի օրվա փոխանակման փոխարժեքով:

3.10.4. Դրամային հոդվածները առկա դրամական միջոցներ են, ինչպես նաև դրամական միջոցներով ստացման և վճարման ենթակա ակտիվները և պարտավորությունները: Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները հաշվառելու նպատակով դրամային հոդվածներ են համարվում նաև արտարժույթով տրված և ստացված կանխավճարները:

Ոչ դրամային հոդվածները հաշվեկշռի բոլոր հոդվածներն են, բացառությամբ առկա դրամային միջոցների, ինչպես նաև դրամական միջոցներով ստացման և վճարման ենթակա ակտիվների և պարտավորությունների:

3.10.5. Որպես փոխանակման փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը:

3.10.6. Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ համալսարանի հաշվետվության մեջ դրամային հոդվածները ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.11. Փոխառության ծախսումներ

3.11.1. Փոխառության ծախսումները տոկոսների վճարման և այլ ծախսումներ են, որոնք ընկերությունը կատարում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ:

3.11.2. Փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են, բացի 3.11.3. կետում նշված դեպքերի:

- 3.11.3. Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն կապված են որակավորվող ակտիվի ձեռք բերման, կառուցման կամ արտադրության հետ, կապիտալացվում են որպես տվյալ ակտիվին վերագրվող ծախսումների (ինքնարժեքի) մի մաս:
- 3.11.4. Հատկապես որակավորվող ակտիվ ձեռք բերելու (կառուցելու, արտադրելու) նպատակով փոխ առնված միջոցների գծով փոխառության ծախսումների գումարը, որը ենթակա է այդ ակտիվի վրա կապիտալացման, որոշվում է տվյալ ժամանակաշրջանում փոխառության իրական (փաստացի) ծախսումների և այդ փոխառության ժամանակավոր ներդրումից ստացվող եկամտի տարբերությամբ:
Որակավորվող ակտիվը այն ակտիվն է, որին անհրաժեշտ է ժամանակի մի զգալի հատված, որպեսզի այն պատրաստ լինի ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար:
- 3.11.5. Այնքանով, որքանով որ միջոցները հիմնականում փոխ են առնվում և օգտագործվում են որակավորվող ակտիվի ձեռք բերման (կառուցման, արտադրության) նպատակով, կապիտալացման ենթակա փոխառության ծախսումների գումարը որոշվում է այդ ակտիվի վրա օգտագործված գումարների նկատմամբ կապիտալացման դրույքը կիրառելով: Կապիտալացման դրույքը տվյալ ժամանակաշրջանում ընկերության չմարված փոխառությունների նկատմամբ կիրառվող փոխառության ծախսումների կշռված միջինն է, բացի հատկապես որակավորվող ակտիվի ձեռք բերման (կառուցման, արտադրության) նպատակով կատարված փոխառություններից: Մեկ հաշվետու ժամանակաշրջանում կապիտալացված փոխառության ծախսումների գումարը չպետք է գերազանցի այդ ժամանակաշրջանում կատարված փոխառության ծախսումներին:
- 3.11.6. Փոխառության ծախսումների կապիտալացումը, որպես որակավորվող ակտիվի արժեքի մի մաս, սկսվում է, երբ`
ա) ակտիվի ձեռք բերման, կառուցման, արտադրության համար օգտագործվում է գումար,
բ) կատարվում են փոխառության ծախսումներ,
գ) ընթացքի մեջ այն աշխատանքը, որն անհրաժեշտ է ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար:
- 3.11.7. Փոխառության ծախսումների կապիտալացումը կասեցվում է, երբ երկարաձգված ժամանակահատվածի ընթացքում ակտիվի վրա կատարվող աշխատանքներն ընդհատվում են:
- 3.11.8. Փոխառության ծախսումների կապիտալացումը դադարեցվում է, երբ որակավորվող ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար անհրաժեշտ աշխատանքները հիմնականում կատարված են:

3.12. Էական սխալներ

- 3.12.1. Էական սխալներ` ընթացիկ ժամանակաշրջանում բացահայտված սխալներն են, որոնք այնպիսի նշանակություն ունեն, որ նախորդ մեկ կամ ավելի ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները չեն կարող այլևս արժանահավատ համարվել` իրենց ներկայացման ամսաթվի դրությամբ:
- 3.12.2. Նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում, ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը: Համեմատելի տեղեկատվությունը վերաներկայացվում է` քնի դեռ դա իրագործելի է:

3.13. Փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում

3.13.1. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ներգարվում է զուտ շահույթի կամ վնասի որոշման մեջ.

ա) փոփոխման ժամանակաշրջանում՝ եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա,

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է երկուսի վրա էլ:

3.13.2. Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

3.14. Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

3.14.1. Համալսարանի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվում է, երբ հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ տեղի են ունեցել փոփոխություններ, կամ եթե այդ փոփոխությունը նպաստում է համալսարանի ֆինանսական հաշվետվություններում տնտեսական գործունեության դեպքերի և գործառնությունների առավել ճշգրիտ ներկայացմանը:

3.14.2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ չեն համարվում.

ա) հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը տնտեսական գործունեության այնպիսի դեպքերի և գործարքների համար, որոնք իրենց բովանդակությամբ տարբերվում են նախորդ տնտեսական գործունեության դեպքերից և գործարքներից,

բ) նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունում՝ տնտեսական գործունեության դեպքերի և գործարքների համար, որոնք առաջ տեղի չեն ունեցել կամ հանդիսացել են ոչ էական:

3.14.3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը, որը կատարվում է հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտի ընդունման հետ կապված, կիրառվում է ըստ անցումային դրույթների, եթե այդպիսիք կան տվյալ հաշվապահական հաշվառման ազգային ստանդարտում: Անցումային դրույթների բացակայության դեպքում, հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է ըստ 3.14.4 կետում սահմանված մոտեցման:

3.14.4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է հետընթաց, եթե նախորդ ժամանակաշրջանին վերաբերող ցանկացած ճշգրտումից առաջացող գումար խելամտորեն որոշելի է: Յուրաքանչյուր առաջացող ճշգրտում հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում ներկայացվում է որպես չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում: Համեմատելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է առաջընթաց, երբ գումարը, որը համաձայն վերը նշված պարբերության ենթակա է արտացոլման որպես հաշվետու ժամանակաշրջանի սկզբնական մնացորդի ճշգրտում, հնարավոր չէ խելամտորեն որոշել:

3.15. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները

3.15.1. Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների կողմից մատուցված ծառայության դիմաց համալսարանի կողմից ցանկացած ձևով տրվող հատուցումներն են:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներն են (բացի ազատման նպաստներից և սեփական կապիտալի գործիքներով (կամ դրանց հետ կապված) հատուցումներից), որոնք ամբողջությամբ ենթակա են վճարման այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը:

3.15.2. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են այնպիսի հոդվածներ, ինչպիսիք են՝

- ա) աշխատավարձերը և սոցիալական ապահովության սահմանումները (վճարները),
- բ) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները), երբ ակնկալվում է, որ բացակայությունները տեղի կունենան այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան աշխատանքային ծառայությունը,
- գ) շահույթի բաշխումները և պարգևավճարները, որոնք ենթակա են վճարման այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունը,
- դ) ոչ դրամային հատուցումները (օրինակ՝ բուժսպասարկում, բնակարանով և ավտոմեքենայով ապահովում, անվճար կամ մասնակի վճարումով ապրանքներ կամ ծառայություններ) ընթացիկ ժամանակաշրջանում աշխատող աշխատակիցների համար:

3.15.3. Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համալսարանին մատուցել է ծառայություն, համալսարանը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, համալսարանը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման այլ ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, ՀՀՀՀՄ 2 «Պաշարներ» և ՀՀՀՀՄ 16 «Հիմնական միջոցներ»):

3.15.4. Համալսարանը փոխհատուցելի ծառայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները, ըստ 3.15.2. կետի, ճանաչում է՝

- ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ, աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ,

- բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:
- 3.15.5. Համալսարանը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափորմ է որպես լրացուցիչ գումար, որը համալսարանն ակնկալում է վճարել որպես հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:
- 3.15.6. Համալսարանը շահույթի բաշխումների և պարզավճարների վճարման ակնկալվող ծախսումները ճանաչում են 3.15.3. կետի համաձայն, և միայն այն ժամանակ, երբ՝
- ա) համալսարանն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք,
 - բ) պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել,
 - գ) հնարավոր է արժանահավատորեն որոշել հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանը,
 - դ) հնարավոր է արժանահավատորեն որոշել գործարքի կատարման ժամանակ արված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:
- 3.15.7. Գործարքի ավարտվածության աստիճանը որոշվում է ներքոթվարկյալ մեթոդներից որևէ մեկով (համալսարանը կիրառում է այն մեթոդը, որով հնարավոր է առավել արժանահավատորեն չափել մատուցված ծառայությունները)՝
- ա) կատարված աշխատանքների ուսումնասիրություն,
 - բ) տվյալ ամսաթվի դրությամբ մատուցված ծառայությունների ծավալի և մատուցվելիք ծառայությունների ամբողջ ծավալի հարաբերակցությունը,
 - գ) տվյալ ամսաթվի դրությամբ կատարված ծախսումների և գործարքի գնահատված ընդհանուր ծախսումների ծավալի հարաբերակցությունը:
- 3.15.8. Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:
- 3.15.9. Համալսարանի կողմից մատուցված ծառայությունների իրացումից հասույթը ճանաչվում է.
- ա) վճարովի ուսուցման մատուցման ծառայությունների գծով՝ ուսանողի տարեկան վարձավճարը բաժանելով 12-ի՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր ամսուս կատարվելիք ճշգրտումները (մասնավորապես նոր ընդունված, հեռացված, տարկետված ուսանողների գծով),
 - բ) այլ ծառայությունների գծով՝ դրանց մատուցմանը զուգընթաց՝ յուրաքանչյուր ամսվա կտրվածքով:

3.16. Շահութահարկի գծով ծախսեր

- 3.16.1. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանի համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:
- 3.16.2. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և

հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

3.16.3. Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝

ա) գուղվիլից, եթե դրա ամորտիզացման հարկային նպատակներով նվազեցման (հանման) ենթակա չէ, կամ՝

բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որը՝

I. ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ, և՝

II. այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

3.16.4. Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է բոլոր նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են՝

ա) բացասական գուղվիլից, որը դիտվում է որպես հետաձգված եկամուտ՝ համաձայն ՀՀՀՀՄ 22 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» ստանդարտի, կամ՝

բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որը՝

I. ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ, և՝

II. այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

3.16.5. Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցած չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ համալսարանը ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

3.16.6. Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

3.16.7. Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չպետք է զեղչվեն (դիսկոնտավորվեն):

3.16.8. Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Համալսարանը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած

այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

3.16.9.Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկերն առաջանում են՝

ա) գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում անմիջականորեն ճանաչվում է սեփական կապիտալում կամ՝

բ) իրենից ձեռքբերում ներկայացնող ձեռնարկատիրական գործունեության միավորումից:

3.16.10.Ընթացիկ և հետաձգված հարկը ուղղակիորեն դեբետագրվում կամ կրեդիտացվում է սեփական կապիտալին, եթե հարկը վերաբերում է այն հողվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ուղղակիորեն դեբետագրվում կամ կրեդիտացվում են սեփական կապիտալին:

3.16.11.Համալսարանի ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցվում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

3.16.12.Համալսարանը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և՝

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

I. նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝

II. տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

3.17. Ակտիվների արժեզրկում

3.17.1.Սույն բաժնում նշված մոտեցումները կիրառվում են բոլոր ակտիվների արժեզրկումը հաշվառելիս, բացառությամբ՝

ա) պաշարների (ՀՀՀՀՄ 2 «Պաշարներ» ստանդարտ),

բ) կառուցման պայմանագրերից առաջացող ակտիվների (ՀՀՀՀՄ 11 «Կառուցման պայմանագրեր» ստանդարտ),

գ) հետաձգված հարկային ակտիվների (ՀՀՀՀՄ 12 «Շահութահարկ» ստանդարտ),

դ) աշխատակիցների հատուցումից առաջացող ակտիվների (ՀՀՀՀՄ 19 «Աշխատակիցների հատուցումներ» ստանդարտ),

- ե) ֆինանսական ակտիվների, որոնք ներառված են ՀՀՀՀՄ 32 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումը և ներկայացումը» ստանդարտի գործողության ոլորտում, և
- զ) իրական արժեքով չափվող ներդրումային գույքի (ՀՀՀՀՄ 40 «Ներդրումային գույք» ստանդարտ):

3.17.2. Համալսարանը յուրաքանչյուր հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գնահատում է, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ գոյություն ունի, ապա համալսարանը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

3.17.3. Գնահատելիս, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել, համալսարանը պետք է դիտարկի առնվազն հետևյալ հայտանիշները.

Տեղեկատվության արտաքին աղբյուրներ.

- ա) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ակտիվի շուկայական արժեքը նվազել է զգալիորեն ավելի մեծ չափով, քան կակնկալվեր որոշակի ժամանակ անցնելու կամ սովորական օգտագործման արդյունքում,
- բ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում տեղի են ունեցել կամ մոտ ապագայում տեղի կունենան համալսարանի համար անբարենպաստ հետևանք ունեցող նշանակալի փոփոխություններ տեխնոլոգիական, շուկայական, տնտեսական կամ իրավական միջավայրում կամ այն շուկայում, որի համար նախատեսված է տվյալ ակտիվը,
- գ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շուկայական տոկոսադրույքները կամ ներդրումների շուկայական այլ հատույցադրույքները աճել են, և հավանական է, որ այդ աճը կազդի զեղչման դրույքների վրա, որոնք կիրառվում են ակտիվի օգտագործման արժեքը հաշվարկելիս, և էականորեն կնվազեցնի ակտիվի փոխհատուցվող գումարը,
- դ) հաշվետու կազմակերպության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է, քան նրա շուկայական կապիտալացումը.

Տեղեկատվության ներքին աղբյուրներ.

- ե) վկայություն կա ակտիվի բարոյական մաշվածության կամ ֆիզիկական վնասվածության վերաբերյալ,
- զ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում տեղի են ունեցել կամ ակնկալվում է, որ մոտ ապագայում տեղի կունենան համալսարանի համար անբարենպաստ հետևանք ունեցող նշանակալի փոփոխություններ ակտիվի ներկա կամ ակնկալվող օգտագործման աստիճանի (ինտենսիվության) և եղանակի մեջ: Այս փոփոխությունները ներառում են ծրագրեր՝ ակտիվը նախապես ակնկալվող ամսաթվից շուտ օտարելու կամ այն գործառնությունը ընդհատելու կամ վերակառուցելու վերաբերյալ, որին պատկանում է այդ ակտիվը,
- է) ներքին հաշվետվական համակարգը վկայում է, որ ակտիվի տնտեսական ցուցանիշներն ավելի ցածր են կամ կլինեն ավելի ցածր, քան ակնկալվում էր:

3.17.4. Ակտիվի օգտագործման արժեքի գնահատումը ներառում է հետևյալ քայլերը.

- ա) դրամական միջոցների ապագա ներհոսքերի և արտահոսքերի գնահատումը, որոնք առաջանալու են ակտիվի շարունակական օգտագործումից և նրա վերջնական օտարումից,

- բ) նշված դրամական միջոցների ապագա հոսքերի նկատմամբ ընդունելի (տեղին) գեղջման դրույքի կիրառումը:

3.17.5. Օգտագործման արժեքը չափելիս.

- ա) դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները հիմնվում են պատճառաբանված և օժանդակող ենթադրությունների վրա, որոնք ներկայացնում են ղեկավարության լավագույն գնահատականը այն տնտեսական պայմանների վերաբերյալ, որոնք գոյություն կունենան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում: Առավել մեծ կարևորություն է տրվում արտաքին վկայություններին,
- բ) դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները հիմնվում են ամենավերջին ֆինանսական նախահաշիվների (ծրագրերի) վրա, որոնք հաստատվել են ղեկավարության կողմից: Նախահաշիվների (ծրագրերի) վրա հիմնված կանխատեսումները ընդգրկում են առավելագույնը հինգ տարվա ժամանակաշրջան, եթե հնարավոր չէ հիմնավորել ավելի երկար ժամանակաշրջանի ընդգրկումը,
- գ) դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները, որոնք վերաբերում են ամենավերջին ֆինանսական նախահաշիվներով (ծրագրերով) նախատեսված ժամանակաշրջաններից հետո ընկած ժամանակաշրջաններին, գնահատվում են ֆինանսական նախահաշիվների (ծրագրերի) վրա հիմնված կանխատեսումների էքստրապոլյացիայի միջոցով՝ հետագա տարիների համար օգտագործելով կայուն կամ նվազող աճի տեմպը, եթե հնարավոր չէ հիմնավորել ավելացող աճի տեմպը: Օգտագործվող աճի տեմպը չի գերազանցում երկարաժամկետ աճի միջին տեմպին այն արտադրանքների, արտադրության ճյուղերի կամ երկրի (երկրների) համար, որտեղ գործում է կազմակերպությունը, կամ այն շուկաների համար, որտեղ ակտիվն օգտագործվում է, եթե հնարավոր չէ հիմնավորել ավելի բարձր տեմպ:

3.17.6. Դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումները պետք է ներառեն՝

- ա) ակտիվի շարունակական օգտագործումից առաջացող դրամական միջոցների ներհոսքերի կանխատեսումները,
- բ) դրամական միջոցների արտահոսքերի կանխատեսումները, որոնք անհրաժեշտաբար առաջանում են ակտիվի շարունակական օգտագործումից դրամական միջոցների ներհոսքեր ապահովելու նպատակով (ներառյալ ակտիվը օգտագործման համար նախապատրաստելու նպատակով դրամական միջոցների արտահոսքերը), և որոնք կարող են պատճառաբանված և հետևողական հիմունքներով ուղղակիորեն վերագրվել կամ բաշխվել տվյալ ակտիվին,
- գ) դրամական միջոցների զուտ հոսքերը, եթե այդպիսիք կան, որոնք ստացվելու են (կամ վճարվելու են) ակտիվի օտարման դիմաց՝ նրա օգտակար ծառայության ավարտին:

3.17.7. Դրամական միջոցների ապագա հոսքերը գնահատվում են՝ հաշվի առնելով ակտիվի ընթացիկ վիճակը: Դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումները չեն ներառում դրամական միջոցների գնահատված ապագա ներհոսքերն ու արտահոսքերը, որոնց առաջացումն ակնկալվում է՝

- ա) ապագա վերակառուցումից, որի իրականացման պարտավորությունը համալսարանը դեռևս չի ստանձնել,

- բ) ապագա կապիտալ բնույթի ծախսումներից, որոնք բարելավելու կամ կատարելագործելու են ակտիվն այնպես, որ գերազանցվելու են ակտիվի՝ սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշները:
- 3.17.8. Դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումները չեն ներառում՝
- ա) ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ներհոսքերը կամ արտահոսքերը,
- բ) շահութահարկի գծով մուտքերը կամ վճարումները:
- 3.17.9. Ակտիվի օտարման դիմաց՝ նրա օգտակար ծառայության ավարտին ստացվելիք (կամ վճարվելիք) դրամական միջոցների գույք հոսքերի գնահատված մեծությունը հավասար է այն գումարին, որը որն համալսարանն ակնկալում է ստանալ ակտիվի օտարումից՝ իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության» գործարքում՝ օտարման գնահատված ծախսումները հանելուց հետո:
- 3.17.10. Զեղչման դրույքը (դրույքները) այն դրույքն (դրույքներն) է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է դրամի արժեքը ժամանակի մեջ, ինչպես նաև տվյալ ակտիվին հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:
- Զեղչման դրույքը (դրույքները) չի արտացոլում այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:
- 3.17.11. Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:
- 3.17.12. Արժեզրկումից կորուստն անմիջապես ճանաչվում է որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը, համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների, հաշվառվում է վերագնահատված արժեքով (օրինակ՝ համաձայն ՀՀՀՀՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի թույլատրելի այլընտրանքային մոտեցման): Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման այդ ստանդարտի:
- 3.17.13. Երբ արժեզրկումից կորստի գնահատված գումարն ավելի մեծ է, քան նույն ակտիվի հաշվեկշռային արժեքը, ապա համալսարանը ճանաչում է պարտավորություն այն և միայն այն դեպքում, եթե դա պահանջվում է Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներով:
- 3.17.14. Արժեզրկումից կորստի ճանաչումից հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար:
- 3.17.15. Եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվ: Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, համալսարանը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

3.17.16. Եթե ակտիվի կամ ակտիվների խմբի մատուցված ծառայությունների համար գոյություն ունի գործող շուկա, ապա այդ ակտիվը կամ ակտիվների խումբը դիտարկվում է որպես դրամաստեղծ միավոր, եթե նույնիսկ այդ ծառայությունն ամբողջությամբ կամ մասամբ օգտագործվում է ներքին նպատակների համար: Եթե դա այդպես, ապա պետք է օգտագործվի դեկավարության՝ ծառայության ապագա շուկայական գների լավագույն գնահատականը՝

ա) երբ, այդ դրամաստեղծ միավորի օգտագործման արժեքը որոշելու համար գնահատվում են դրամական միջոցների այն ապագա ներհոսքերը, որոնք վերաբերում են այդ ծառայության՝ ներքին նպատակների համար օգտագործմանը,

բ) երբ, հաշվետու կազմակերպության այլ դրամաստեղծ միավորի օգտագործման արժեքը որոշելու համար գնահատվում են դրամական միջոցների այն ապագա արտահոսքերը, որոնք վերաբերում են այդ ծառայության ներքին նպատակների համար օգտագործմանը:

3.17.17. Նույն ակտիվի կամ նմանատիպ ակտիվների դրամաստեղծ միավորը որոշվում է հետևողականորեն՝ մի ժամանակաշրջանից մյուսը, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխությունը հիմնավորված է:

3.17.18. Դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը որոշվում է դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարին համահունչ:

3.17.19. Դրամաստեղծ միավորի արժեզրկված լինելը ստուգելիս համալսարանը որոշում է, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններում ճանաչվել է տվյալ դրամաստեղծ միավորին վերաբերող (մասամբ կամ ամբողջությամբ) գուղվիլ: Եթե դա այդպես է, ապա համալսարանը՝

ա) անցկացնում է «վարից վեր» ստուգում, այսինքն, համալսարանը՝

I. որոշում է, թե արդյոք գուղվիլի հաշվեկշռային արժեքը կարող է պատճառաբանված և հետևողական հիմունքով բաշխվել քննարկվող դրամաստեղծ միավորին,

II. ապա համեմատում է քննարկվող դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը նրա հաշվեկշռային արժեքի հետ (ներառյալ այդ միավորին բաշխված գուղվիլի հաշվեկշռային արժեքը, եթե այդպիսին գոյություն ունի) և ճանաչի արժեզրկումից կորուստ 3.17.21. կետի պահանջների համաձայն:

Համալսարանն անցկացնում է «վարից վեր» ստուգման երկրորդ փուլը, նույնիսկ եթե գուղվիլի հաշվեկշռային արժեքը հնարավոր չէ պատճառաբանված և հետևողական հիմունքով բաշխել քննարկվող դրամաստեղծ միավորին, և

բ) եթե «վարից վեր» ստուգումն անցկացնելիս համալսարանը չի կարող գուղվիլի հաշվեկշռային արժեքը, պատճառաբանված և հետևողական հիմունքով բաշխվել քննարկվող դրամաստեղծ միավորին, ապա այն անցկացնում է նաև «վերից վար» ստուգումը, այսինքն, ընկերությունը՝

I. որոշում է այն փոքրագույն դրամաստեղծ միավորը, որը ներառում է քննարկվող դրամաստեղծ միավորը և որին պատճառաբանված և հետևողական հիմունքով կարող է բաշխվել գուղվիլի հաշվեկշռային արժեքը (ավելի խոշոր դրամաստեղծ միավոր),

II. ապա համեմատում է այս՝ ավելի խոշոր դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը նրա հաշվեկշռային արժեքի հետ (ներառյալ այդ միավորին բաշխված

գուղվիլի հաշվեկշռային արժեքը) և ճանաչում է արժեգրկումից կորուստ 3.17.21 կետի պահանջների համաձայն:

3.17.20. Դրամաստեղծ միավորի արժեգրկված լինելը ստուգելիս համալսարանը որոշում է բոլոր այն կորպորատիվ ակտիվները, որոնք վերաբերում են (մասամբ կամ ամբողջովին) քննարկվող դրամաստեղծ միավորին: Ապա որոշված յուրաքանչյուր կորպորատիվ ակտիվի համար համալսարանը կիրառում է 3.17.19-ը, այսինքն՝

ա) եթե կորպորատիվ ակտիվի հաշվեկշռային արժեքը կարող է պատճառաբանված և հետևողական հիմունքով բաշխվել քննարկվող դրամաստեղծ միավորին, ընկերությունը կիրառում է միայն «վարից վեր» ստուգումը, և

բ) եթե կորպորատիվ ակտիվի հաշվեկշռային արժեքը չի կարող պատճառաբանված և հետևողական հիմունքով բաշխվել քննարկվող դրամաստեղծ միավորին, ընկերությունը կիրառում է և «վարից վեր», և «վերից վար» ստուգումները:

3.17.21. Դրամաստեղծ միավորի գծով արժեգրկումից կորուստը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, եթե նրա փոխհատուցվող գումարն ավելի փոքր է հաշվեկշռային արժեքից: Դրամաստեղծ միավորի գծով արժեգրկումից կորուստը, այդ միավորի ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցնելու նպատակով, բաշխվում է հետևյալ հերթականությամբ՝

ա) նախ՝ դրամաստեղծ միավորին բաշխված գուղվիլին (եթե այդպիսին գոյություն ունի),

բ) ապա՝ դրամաստեղծ միավորի այլ ակտիվներին՝ համամասնական հիմունքով՝ հիմք ընդունելով այդ միավորի յուրաքանչյուր ակտիվի հաշվեկշռային արժեքը:

Հաշվեկշռային արժեքի այդ նվազեցումները դիտվում են որպես առանձին ակտիվների գծով արժեգրկումից կորուստ և ճանաչվում են 3.17.12 կետի համաձայն:

3.17.22. Արժեգրկումից կորուստները 3.17.21 կետի համաձայն բաշխելիս՝ ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցման արդյունքում չպետք է փոքր լինի, քան հետևյալ մեծություններից առավելագույնը՝

ա) նրա վաճառքի գուտ գինը (եթե այն հնարավոր է որոշել),

բ) նրա օգտագործման արժեքը (եթե այն հնարավոր է որոշել),

գ) զրո:

Արժեգրկումից կորստի գումարը, որն այլապես բաշխվելու էր այդ ակտիվին, պետք է համամասնական հիմունքով բաշխվի միավորի այլ ակտիվներին:

3.17.23. Համալսարանը յուրաքանչյուր հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գնահատում է, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվի գծով նախորդ տարիներին ճանաչված արժեգրկումից կորուստն հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Եթե որևէ այդպիսի հայտանիշ գոյություն ունի, ապա համալսարանը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

3.17.24. Գնահատելիս, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվի գծով նախորդ տարիներին ճանաչված արժեգրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է, համալսարանը դիտարկում է առնվազն հետևյալ հայտանիշները.

Տեղեկատվության արտաքին աղբյուրներ.

ա) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ակտիվի շուկայական արժեքը զգալիորեն աճել է,

բ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում տեղի են ունեցել կամ մոտ ապագայում տեղի կունենան համալսարանի համար բարենպաստ հետևանք ունեցող նշանակալի

փոփոխություններ այն տեխնոլոգիական, շուկայական, տնտեսական կամ իրավական միջավայրում, որտեղ գործում է համալսարանը, կամ այն շուկայում, որի համար նախատեսված է տվյալ ակտիվը,

զ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շուկայական տոկոսադրույքները կամ ներդրումների շուկայական այլ հատույցադրույքները նվազել են, և հավանական է, որ այդ նվազումը կազդի զեղչման դրույքների վրա, որոնք կիրառվում են ակտիվի օգտագործման արժեքը հաշվարկելիս և էականորեն կմեծացնի ակտիվի փոխհատուցվող գումարը,

Տեղեկատվության ներքին աղբյուրներ.

դ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում տեղի են ունեցել կամ ակնկալվում է, որ մոտ ապագայում տեղի կունենան ընկերության համար բարենպաստ հետևանք ունեցող նշանակալի փոփոխություններ ակտիվի ներկա կամ ակնկալվող օգտագործման աստիճանի (ինտենսիվության) և եղանակի մեջ: Այս փոփոխությունները ներառում են կապիտալ բնույթի ծախսումներ, որոնք բարելավելու կամ կատարելագործելու են ակտիվն այնպես, որ գերազանցվեն ակտիվի՝ սկզբնապես գնահատված տնտեսական ցուցանիշները, կամ այն գործառնությունը ընդհատելու կամ վերակառուցելու պարտականությունը, որին պատկանում է այդ ակտիվը,

ե) ներքին հաշվետվական համակարգը վկայում է, որ ակտիվի տնտեսական ցուցանիշները ավելի բարձր են կամ կլինեն ավելի բարձր, քան ակնկալվում էր:

3.17.25. Ակտիվի գծով նախորդ տարիներին ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է այն և միայն այն դեպքում, եթե, սկսած այն պահից, երբ վերջին անգամ ճանաչվել էր արժեզրկումից կորուստ կամ հակադարձվել էր արժեզրկումից կորուստը, տեղի են ունեցել փոփոխություններ ակտիվի փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Եթե դա այդպես է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը: Այս ավելացումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորստի հակադարձում:

3.17.26. Արժեզրկումից կորստի հակադարձման հետևանքով ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մաշվածության), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով ճանաչված չլիներ արժեզրկումից կորուստ:

3.17.27. Ակտիվի գծով արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը, համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման մեկ այլ ստանդարտի, հաշվառվում է վերագնահատված արժեքով (օրինակ՝ համաձայն ՀՀՀՀՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի թույլատրելի այլընտրանքային մոտեցման): Վերագնահատված ակտիվի արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում պետք է դիտվի որպես վերագնահատումից արժեքի աճ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների:

3.17.28. Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչելուց հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեզրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա

մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

3.17.29. Դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորստի հակադարձումը, այդ միավորի ակտիվների հաշվեկշռային արժեքն ավելացնելու նպատակով, բաշխվում է հետևյալ հերթականությամբ՝

ա) նախ՝ ակտիվներին, բացի գուդվիլից՝ համամասնական հիմունքով՝ հիմք ընդունելով այդ միավորի յուրաքանչյուր ակտիվի հաշվեկշռային արժեքը,

բ) ապա՝ դրամաստեղծ միավորին բաշխված գուդվիլին (եթե այդպիսին գոյություն ունի), եթե բավարարվում են պարագրաֆ 3.17.30 կետի պահանջները:

Հաշվեկշռային արժեքների այդ ավելացումները դիտվում են որպես առանձին ակտիվների գծով արժեզրկումից կորստի հակադարձում և ճանաչվում են պարագրաֆ 3.17.27 կետի համաձայն:

3.17.30. Դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորստի հակադարձումը 3.19.29 կետի համաձայն բաշխելիս ակտիվի հաշվեկշռային արժեքը չպետք է մեծ լինի, քան հետևյալ մեծություններից նվազագույնը՝

ա) նրա փոխհատուցվող գումարը (եթե այն հնարավոր է որոշել) (եթե այն հնարավոր է որոշել),

բ) հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի գծով նախորդ տարիներին ճանաչված չլինի արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորստի հակադարձման գումարը, որն այլապես բաշխվելու էր այդ ակտիվին, համամասնական հիմունքով բաշխվում է միավորի այլ ակտիվներին:

3.17.31. Որպես պարագրաֆ 3.17.25 կետի պահանջների բացառություն, գուդվիլի գծով ճանաչված արժեզրկումից կորուստը չի հակադարձվում հետագա ժամանակաշրջանում, բացառությամբ, երբ՝

ա) արժեզրկումից կորստի պատճառ է հանդիսացել բացառիկ բնույթի յուրահատուկ արտաքին իրադարձություն, որի կրկնվելն ապագայում չի ակնկալվում,

բ) հետագայում տեղի են ունեցել իրադարձություններ, որոնք վերացրել են այդ իրադարձության ազդեցությունը:

3.18. Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

3.18.1. Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերը այն բարենպաստ և ոչ բարենպաստ դեպքերն են, որոնք տեղի են ունենում հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները վավերացվում (ստորագրվում) են ներկայացնելու (օրենսդրությամբ սահմանված հասցեներով) համար: Տարբերակվում է դեպքերի երկու տեսակ՝

ա) դեպքեր, որոնք հաստատում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող պայմանները (իրավիճակը) (հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր), և՝

բ) դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո առաջացած պայմանները (իրավիճակը) (հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքեր):

3.18.2. Համալսարանը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերն արտացոլելու նպատակով:

3.18.3. Համալսարանը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

3.19. Ֆինանսական վարձակալություն

3.19.1. Որպես վարձակալ համալսարանը հաշվապահական հաշվեկշռում ֆինանսական վարձակալությունը ճանաչում է որպես ակտիվ և պարտավորություն այն գումարով, որը վարձակալության սկզբում հավասար է վարձակալված գույքի իրական արժեքին կամ վարձակալական նվազագույն վճարների ներկա արժեքին, եթե վերջինս ավելի ցածր է: Նվազագույն վարձավճարների ներկա արժեքի հաշվարկման ժամանակ գեղջման գործակից է հանդիսանում վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այն հնարավոր է որոշել: Իսկ եթե հնարավոր չէ՝ ապա օգտագործվում է համալսարանի (վարձակալի) լրացուցիչ (հավելյալ) փոխառության տոկոսադրույքը:

3.19.2. Վարձավճարները բաշխվում են ֆինանսական վճարի և չվճարված պարտավորությունների նվազեցման միջև: Ֆինանսական վճարը վարձակալության ժամկետի ընթացքում ըստ ժամանակաշրջանների բաշխվում է այնպես, որպեսզի ստացվի հաստատուն պարբերական տոկոսադրույք յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ:

3.19.3. Ֆինանսական վարձակալությունը առաջացնում է մաշվածության ծախսումներ՝ մաշվող (ամորտիզացիայի) ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական ծախսեր՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար: Վարձակալված մաշվող (ամորտիզացվող) ակտիվների մաշվածության հաշվարկման քաղաքականությունը համապատասխանում է սեփական ակտիվների մաշվածության հաշվարկման քաղաքականությանը, իսկ մաշվածության (ամորտիզացիայի) հաշվարկը կատարվում է համաձայն ՀՀՀՀՍ 16 «Հիմնական միջոցներ» և ՀՀՀՀՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտների: Եթե չկա բավարար համոզվածություն, որ ընկերությունը (վարձակալը) վարձակալության ժամկետի վերջում ձեռք է բերելու սեփականության իրավունքը, ապա ակտիվն ամբողջովին ամորտիզացվում է հետևյալ երկու ժամկետներից առավել կարճի ընթացքում՝ վարձակալության ժամկետի կամ օգտակար ծառայության ժամկետի:

3.20. Գործառնական վարձակալություն

3.20.1. Գործառնական վարձակալությունը ֆինանսական վարձակալություն չհանդիսացող վարձակալություն է, այսինքն՝ այնպիսի վարձակալություն է, որի դեպքում վարձակալին չեն փոխանցվում վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները:

3.20.2. Գործառնական վարձակալության տրված (ստացված) ակտիվները ճանաչվում են վարձակալի հաշվեկշռում:

3.20.3. Որպես վարձակալ, գործառնական վարձակալության գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են որպես ծախսում գծային հիմունքով, եթե մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ չի ներկայացնում ակտիվի օգտագործումից օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը:

3.20.4. Որպես վարձատու, վարձակալական եկամուտը (բացառությամբ մատուցված ծառայությունների գծով եկամուտներից) վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է գծային հիմունքով, եթե մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ չի ներկայացնում վարձակալության տրված ակտիվներից օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը: Սկզբնական ուղղակի ծախսումները, որոնք հատուկ կատարվել են գործառնական վարձակալությունից եկամուտ վաստակելու նպատակով, հետաձգվում և բաշխվում են վարձակալության ժամկետի ընթացքում՝ վարձակալական եկամտի ճանաչմանը համամասնորեն:

3.21. Պահուստներ, պայմանական պարտավորություններ, պայմանական ակտիվներ

3.21.1. Համալսարանը ճանաչում է պահուստ, երբ՝

- ա) ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի (պարտավորեցնող դեպք) արդյունք,
- բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և
- գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

3.21.2. Այն դեպքերում (օրինակ՝ դատավարության ընթացքում), երբ հստակ չէ, թե արդյոք ընկերությունն ունի ներկա պարտականություն, թե՛ ոչ, ենթադրվում է, որ անցյալ դեպքը հանգեցրել է ներկա պարտականության, եթե ավելի հավանական է, քան՝ ոչ, որ ներկա պարտականությունը հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գոյություն ունի:

3.21.3. Պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

3.21.4. Պահուստի չափման ժամանակ օգտագործվում են հետևյալ մոտեցումները.

- ա) պահուստի լավագույն գնահատականը որոշելու համար հաշվի են առնվում այն ռիսկերը և անորոշությունները, որոնք անխուսափելիորեն ի հայտ են գալիս բազմաթիվ դեպքերում և պարագաներում,
- բ) եթե ժամանակի մեջ դրամի արժեքի փոփոխության ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա (զեղչված) արժեքը, որոնք ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունները մարելու համար,
- գ) ապագա դեպքերը, որոնք կարող են ազդեցություն թողնել պարտավորությունը մարելու համար պահանջվող գումարի վրա, արտացոլվում են պահուստում, եթե բավականաչափ անկողմնակալ վկայություն կա, որ դրանք ի հայտ են գալու,
- դ) ակտիվների ակնկալվող օտարումից շահույթները չպետք է հաշվի առնվեն պահուստը չափելիս:

3.21.5. Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում՝ արտացոլելու համար ընթացիկ լավագույն գնահատականը: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է:

3.21.6. Եթե պահուստը ճանաչվել է ներկա (զեղչված) արժեքով, ապա պահուստի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում ավելացվում է՝ արտացոլելու

համար ժամանակի անցնելու փաստը: Այդ ավելացումը ճանաչվում է որպես տոկոսային ծախս:

3.21.7. Պահուստը օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.21.8. Ապագա գործառնական վնասների գծով պահուստներ չի ճանաչվում: Ապագա գործառնական վնասների ակնկալիքը հայտանիշ է այն բանի, որ գործառնությանը պատկանող որոշակի ակտիվներ կարող են արժեզրկված լինել: Այսպիսի դեպքում ընկերությունը ստուգում է ակտիվների արժեզրկված լինելը համաձայն ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի:

3.21.9. Անբարենպաստ պայմանագրի գծով ներկա պարտականությունը ճանաչվում է որպես պահուստ: Անբարենպաստ պայմանագիրն այնպիսի պայմանագիր է, որով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսումները գերազանցում են այդ պայմանագրից ակնկալվող ստացվելիք տնտեսական օգուտները:

3.21.10. Համալսարանը չի ճանաչում պայմանական ակտիվը և պայմանական պարտավորությունը:

3.22. Արժեքորոշման և ֆինանսական արդյունքների որոշման ժամանակաշրջան

3.22.1. Արժեքորոշման և ֆինանսական արդյունքների որոշման ժամանակաշրջան է համարվում՝ հաշվետու ամսվա վերջը:

4. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

4.1. Հիմնական միջոցներ

4.1.1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի երկրորդ կետով սահմանված օգտակար ծառայության ժամանակահատվածի համաձայն հաշվարկված մաշվածության գումարի չափով:

ա) շենքերի, շինությունների համար 20 տարի /տարեկան 5 տոոս դրույքաչափով/,

բ) հաշվողական և համակարգչային տեխնիկայի համար 1 տարի /տարեկան 100 տոկոս դրույքաչափով/,

գ) այլ հիմնական միջոցների համար 5 տարի /տարեկան 20 տոկոս դրույքաչափով/,

դ) մինչև 50 հազար արժողությամբ հիմնական միջոցների համար 1 տարի /տարեկան 100 տոկոս դրույքաչափով/:

4.2. Ոչ նյութական ակտիվներ

4.2.1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է ճանաչված ոչ նյութական ակտիվների՝ ֆինանսական հաշվառման մեջ ընդունված օգտակար ծառայության համաձայն հաշվարկված ամորտիզացիոն գումարի չափով.

ա) համակարգչային ծրագրեր 5 տարի,

բ) լիցենզիաների համար 5 տարի,

գ) հողի օգտագործման իրավունքի համար 99 տարի,

դ) այլ ոչ նյութական ակտիվների համար 5 տարի,

բայց ոչ ավել ոչ նյութական ակտիվի իրավաբանորեն ամրագրված օգտագործման ժամանակահատվածից,

4.3. Ղեբիտորական և կրեդիտորական պարտքեր

4.3.1. Հարկվող շահույթի որոշման նպատակով համալսարանը ձևավորում է ղեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ /պահուստաֆոնդ/, անհուսալի՝ ճանաչում և դուրս գրում ղեբիտորական և կրեդիտորական պարտքերը՝ ՀՀ կառավարության 2002 թ. Դեկտեմբերի 19-ի N-2052-Ն որոշման համաձայն:

4.3.2. Հարկվող շահույթի որոշման նպատակով ղեբիտորական կամ կրեդիտորական պարտքի անհուսալի ճանաչումը և դուրսգրումը չի վերաբերում հաշվապահական հաշվեկշռում ճանաչման նպատակով ղեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի չափմանը, հաշվապահական հաշվեկշռից դուրսգրմանը /ապաճանաչմանը/ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում համապատասխան եկամուտ կամ ծախս ներառելուն /ճանաչելուն/:

4.4. Այլ հոդվածներ

4.4.1. Այլ դեպքերում շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է ֆինանսական հաշվառման մեթոդաբանության ընտրված տարբերակներով, եթե «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով չեն նախատեսվում է դրանց կիրառման առանձնահատկություններ:

5. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՎԱՐՈՒՄ

5.1. Հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման պատասխանատվությունը կրում է համալսարանի գործադիր մարմնի ղեկավարը՝ ռեկտորը:

5.2. Ռեկտորը պարտավոր է՝

- ա) սահմանել համալսարանի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը,
- բ) սահմանել տնտեսական գործառնությունների նկատմամբ իրականացվող վերահսկողության կարգը,
- գ) ապահովել հաշվապահական հաշվառում վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը,

5.3. Համալսարանի գլխավոր հաշվապահն ապահովում է տնտեսական գործառնությունների վերահսկումը և արտացոլումը հաշվապահական հաշվառման մեջ և համապատասխան տեղեկատվության տրամադրումը սահմանաված ժամկետներում և անձանց՝ փաստաթղթաշրջանառության սխեմայով:

5.4. Ռեկտորը և գլխավոր հաշվախահը /սահմանաված դեպքերում՝ նաև այլ պաշտոնատար անձինք/ ստորագրում են ապրանքանյութական արժեքների ու դրամական միջոցների ստացման, բացթողման, ինչպես նաև հաշվարկային, վարկային և այլ համանման պարտավորությունների համար հիմք հանդիսացող փաստաթղթեր:

5.5. Հաշվապահական հաշվառումը համալսարանում իրականացվում է հաշվապահական ծառայության կողմից:

5.6. Համալսարանը վարում է ֆինանսական, ինքնարժեքի, կառավարչական և հարկային հաշվառում:

5.7. Կազմակերպությունում հաշվապահական հաշվառումը վարվում է եղանակով (կամ մեմորիալ-օրդերային, կամ օրագիր- օրդերային եղանակով, կամ համակարգչային ծրագրային փաթեթ օգտագործելով):

5.8. Համալսարանը գույքի, պարտավորությունների և տնտեսական գործառնությունների հաշվառումը վարում է՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000 թ. Դեկտեմբերի 29-ի

N319 հրամանով հաստատված կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվային պլանին համապատասխան կազմված աշխատանքային հաշվային պլանով:

- 5.9.** Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատության ապահովման նպատակով համալսարանը իրականացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2000 թ. Հունիսի 2-ի N 102 հրամանով հաստատված կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգի համաձայն:
- 5.10.** Հաշվապահական ծառայության կառուցվածքը, աշխատողների թվաքանակը և ծառայության յուրաքանչյուր աշխատակցի գործառույթները սահմանվում են համալսարանի ներքին կանոններով և պաշտոնական հրահանգներով:
- 5.11.** Գույքի պահպանման, ֆինանսատնտեսական գործունեության օրինականության և նպատակահարմարության ապահովման, ինչպես նաև հաշվապահական հաշվառման տվյալների արժանահավատության ապահովման նպատակով համալսարանում ստեղծված է ներտնտեսական վերահսկողության համարագ /հաշվապահական հաշվառում/: